## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0009, ք. Երևան, Կորյունի 17

N - Ն-3958

«24» մայիսի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

***Մեծարգո պ-ն նախագահ***

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի թափուր տեղում ընտրելու համար առաջարկում ենք Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրված՝ Վերաքննիչ վարչական դատարանի նախագահ Հովսեփ Լևոնի Բեդևյանի, Վարչական դատարանի դատավոր Հրաչ Մարտունի Այվազյանի և Լիանա Օնիկի Հակոբյանի թեկնածությունները:

Կից ներկայացնում ենք Հ. Բեդևյանի, Հ. Այվազյանի և Լ. Հակոբյանի վերաբերյալ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 6-րդ մասով, 143-րդ հոդվածի 3-րդ մասով և Ազգային ժողովի աշխատակարգով սահմանված փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի թեկնածուներին Ազգային ժողովում կներկայացնի Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատարը:

Առդիր՝ 30 էջ:

**Հարգանքով**

**Պաշտոնակատար՝** **Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ**



# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

| | |
|---|---|
| Ազգանուն, անուն, հայրանուն | Բեդլյան Հովսեփ Լևոնի |
| Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը | 28.02.1975թ., Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ |
| Կրթությունը, ինչ է ավարտել և երբ | Բարձրագույն, Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ 1996թ. |
| Մասնագիտությունը | Իրավագիտություն |
| Մասնագիտական ստաժը | 21 տարի 4 ամիս |
| Դատավորի ստաժը | 13 տարի 4 ամիս |
| Աշխատանքի վայրը | Վերաքննիչ վարչական դատարան |
| Զբաղեցրած պաշտոնը | Դատարանի նախագահ |
| Ընտանեկան դրությունը | Ամուսնացած |
| Քանի երեխա ունի | Երկու |

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

| | |
|---|---|
| 10.01.2000-09.03.2001թթ. | «ՖԷՆ» գույքի իրացման գործակալություն ՊՓԲԸ, իրավաբան |
| 15.03.2001-30.04.2003թթ. | Փաստաբանների միջազգային միության անդամ, փաստաբան |
| 30.04.2003-17.06.2004թթ. | ՀՀ Նախագահի աշխատակազմի պետաիրավական վարչություն, առաջատար մասնագետ |
| 17.06.2004-15.02.2007թթ. | ՀՀ Նախագահի աշխատակազմի պետաիրավական վարչություն, գլխավոր մասնագետ |
| 15.02.2007-21.06.2007թթ. | ՀՀ Նախագահի աշխատակազմի պետաիրավական վարչություն, խորհրդատու |

| | |
|---|---|
| 21.06.2007-25.12.2007թթ. | ՀՀ Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչություն, խորհրդատու |
| 01.01.2008-01.12.2010թթ. | ՀՀ վարչական դատարան, դատավոր |
| 01.12.2010-09.11.2011թթ. | ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, դատավոր |
| 09.11.2011թ.-ից առ այսօր | ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, նախագահ |
| 2011-2014թթ. | Հանդիսացել է դատարանների նախագահների խորհրդի, դեպարտամենտի և բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ |
| 2011-2014թթ. | Դասավանդել է ՀՀ դատական դպրոցում |
| 2013թ. | Ընտրվել է Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամ |
| 2013-2014թթ. | Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի նախագահ |
| 2014թ.-ից առ այսօր | Դասավանդում է Արդարադատության ակադեմիայում |
| 25.07.2014թ. | Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամ |
| 10.02.2017թ. | Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամ |
| 2018թ.-ից առ այսօր | Դասավանդում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում |
| 2020թ.-ից առ այսօր | Հանդիսանում է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունք, քաղաքացիական դատավարության և գործարարական իրավունք մասնագիտացմամբ բակալավրի և մագիստրատուրայի 2019-2020թթ. և 2020-2021թթ. Ուսումնական տարվա ավարտական հանձնաժողովի նախագահ |

| | |
|---|---|
| 21.08.2020թ. | ՀՀ Նախագահի թիվ ՆՀ-193-Ա հրամանագրով իրավակարգի ու օրինականության ամրապնդման և դատական իշխանության զարգացման գործում ներդրած ավանդի համար պարգևատրվել է «Մխիթար Գոշ» մեդալով: |

« 24 » մայիսի 2021թ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-31-Ո-53
2021թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԿԱԶՄԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականի մայիսի 17-ին, դռնփակ նիստում, քննարկելով Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը կազմելու, հաստատելու և Ազգային ժողովին առաջարկություն ներկայացնելու վերաբերյալ հարցը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 133-րդ հոդվածի 10-րդ մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Կազմել և հաստատել Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Ազգային ժողովին առաջարկել սույն որոշմամբ հաստատված անձանց թեկնածությունները՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի թափուր պաշտոնում ընտրելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ

2021թ. մայիսի 17
ք. Երևան

Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
2021 թվականի մայիսի 17-ի թիվ
ԲԴԽ-31-Ո-53 որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

| N | ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ | ԾՆՆԴՅԱՆ ԹԻՎ, ԾՆՆԴԱՎԱՅՐ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ | ՊԱՇՏՈՆ |
|---|---|---|---|---|
| 1. | ԱՅՎԱԶՅԱՆ Հրաչ Մարտունի | 1974թ. Լոռու մարզ, ք. Վանաձոր | Վարչական դատարան | Դատավոր |
| 2. | ԲԵԴԵՎՅԱՆ Հովսեփ Լևոնի | 1975թ. Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ | Վերաքննիչ վարչական դատարան | Նախագահ |
| 3. | ՀԱԿՈԲՅԱՆ Լիանա Օնիկի | 1976թ. ք. Երևան | Վարչական դատարան | Դատավոր |

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ես՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի նախագահ Հովսեփ Բեդևյանս տալիս եմ համաձայնությունս ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի պաշտոնում ընտրվելու համար:

Հ. Բեդևյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Արդարադատության խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 27-ի եզրակացությունները՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավորներ նշանակել՝

1) Լարիսա ՍՈՍՅԱՆԻՆ՝ ազատելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

2) Գալուստ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

3) Աշոտ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

4) Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

5) Արգիշտի ՂԱԶԱՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

6) Ելենա ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

7) Էդվարդ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

8) Համիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

9) Աշոտ ԱԲՈՎՅԱՆԻՆ.

10) Քրիստինե ՄԿՈՅԱՆԻՆ.

11) Հովսեփ ԲԵԴԵՎՅԱՆԻՆ.



12) Հովհաննես ԹՈՐՈՍՅԱՆԻՆ.

13) Արթուր ՊՈՂՈՍՅԱՆԻՆ.

14) Արթուր ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ.

15) Արծրուն ՄԻՐԶՈՅԱՆԻՆ:

2. Երևանի քրեական դատարանի դատավորներ նշանակել՝

1) Ալեքսանդր ԱԶԱՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

2) Մնացական ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

3) Կարինե ՂԱԶԱՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դատավորի լիազորությունները.

4) Եվա ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դատավորի լիազորությունները.

5) Վազգեն ՌՇՏՈՒՆՈՒՆ:

3. Երևանի քաղաքացիական դատարանի դատավորներ նշանակել՝

1) Գոռ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

2) Արթուր ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

3) Սամվել ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

4) Խաչատուր ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

5) Արտակ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

6) Կարինե ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ԱՄՍ 03.12.07
ԻՆԴԵՔ № 1321

7) Էդիկ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

8) Ռուբեն ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

9) Տիգրան ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

10) Մամիկոն ԴՐՄԵՅԱՆԻՆ՝ որպես սնանկության գործեր վարող դատավոր՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

11) Ալեքսեյ ՍՈՒՔՈՅԱՆԻՆ՝ որպես սնանկության գործեր վարող դատավոր՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

12) Կարեն ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ՝ որպես սնանկության գործեր վարող դատավոր՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

13) Նարինե ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ՝ որպես սնանկության գործեր վարող դատավոր՝ դադարեցնելով նրա Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

14) Ռոբերտ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ՝ որպես սնանկության գործեր վարող դատավոր՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները:

4. Հարավային քրեական դատարանի դատավորներ նշանակել՝

1) Համլետ ԴԱՎԹՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

2) Խաչիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները:

5. Հարավային քաղաքացիական դատարանի դատավորներ նշանակել՝

1) Հարություն ԵՆՈՔՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

2) Անահիտ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.



3) Բագրատ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ՝ որպես սնանկության գործեր վարող դատավոր՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

4) Ռուբեն ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻՆ:

6. Հյուսիսային քրեական դատարանի դատավորներ նշանակել՝

1) Վոլոդյա ՂԱԶԱՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

2) Մեսրոպ ՄԱԿՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

3) Հարություն ՄՈՎՍԵՍՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները:

7. Հյուսիսային քաղաքացիական դատարանի դատավորներ նշանակել՝

1) Կարինե ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի դատավորի լիազորությունները.

2) Արշակ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

3) Անի ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

4) Արթուր ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

5) Գոհարիկ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

6) Արշակ ՇԱՀՈՅԱՆԻՆ՝ որպես սնանկության գործեր վարող դատավոր՝ դադարեցնելով նրա Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները.

7) Խաչատուր ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ՝ որպես սնանկության գործեր վարող դատավոր:

8. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

2007թ. նոյեմբերի 30
Երևան
ՆՀ-273-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
# Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Արդարադատության խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 15-ի եզրակացությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավոր նշանակել՝

1) Աշոտ ԱԲՈՎՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավորի լիազորությունները.

2) Արթուր ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավորի լիազորությունները.

3) Հովսեփ ԲԵԴԵՎՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավորի լիազորությունները.

4) Գալուստ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավորի լիազորությունները.

5) Աշոտ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավորի լիազորությունները.

6) Լարիսա ՍՈՍՅԱՆԻՆ՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավորի լիազորությունները:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում 2010 թվականի դեկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2010թ. նոյեմբերի 18
Երևան
ՆՀ- 276 -Ա

1886
22. 11. 2010

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
# Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## Հ. ԲԵԴԵՎՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Արդարադատության խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 4-ի առաջարկությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

Հովսեփ ԲԵԴԵՎՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի նախագահ՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի լիազորությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2011թ. նոյեմբերի 9
Երևան
ՆՀ-298-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆԻՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սահմանադրության 139-րդ հոդվածի 1-ին և 166-րդ հոդվածի 7-րդ մասերը, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 2-ի ԲԴԽ-21-Ո-43 որոշմամբ ներկայացված առաջարկությունը.

Հովսեփ ԲԵԴԵՎՅԱՆԻՆ նշանակել վերաքննիչ վարչական դատարանի նախագահ՝ երեք տարի ժամկետով:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ. հուլիսի 4
Երևան
ՆՀ-364-Ա